Հետազոտականաշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցայինդպրոց»կրթականի իմնադրամ ՎահրամՍողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	Միջառարարկայական կապերի դերը ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում:
Ուսուցչիտվյալներ • Անուն, ազգանուն,հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Նալբանդյան Անահիտ Գառնիկի Ռուսերենի ուսուցչուհի anaida.garnikovna@gmail.com 9-12-րդդ դասարաններ
Ուսումնական հաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ.հասցե (տնօրենության) • Webկայքիհասցե	Արարատ քաղաքի ՀՀ Արարտի մարզ ք. Արարատ Խանջյան 63 հմր.4հիմնական դպրոց ՊՈԱԿ (0234) 4-39-98 ararat4@schools.am ՀՀ Արարտի մարզ ք. Արարատ Խանջյան 63

Ներածությունն

Բովանդակություն

Ներածություն ----------3

ԳԼՈՒԽ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ

1.1 Միջառարկանական կապերի ստեղծման ազդեցությունը սովորողների ճանաչողության զարգացման վրա.....5

Գլուխ2.2.1.Փորձարարականմաս.....10

Եզրակացություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ.....22

Ներածություն

Նպատակը և հետազոտականհարցը	Նպատակը՝Ցույց տալ ռուսաց լեզվի դասի ընթացքում ուսուցչի կողմից միջառարկայական կապերի ստեղծման հնարավոր տարբերակները, դրանց նշանակությունը սովորողների իմացական կարողության զարգացման գործընթացում: Հարց՝ Որքանո՞վ է արդյունավետ միջառարակայական կապերի դերը ռուսերենի ուսուցման ընթացքում միջին դպրոցում և Արարատի մարզի 4 դպրոցի օրինակով:
Ո՞րառանցքային կոմպետենցիային/կարող ունակությաննէ ուղղվածնպատակի ուսումնասիրությունը	Միջառարկայական կապերի ստեղծումն առավել հեշտացնում է սովորողի համակողմանի զարգացման գործընթացը, աշխարհայացքի ու արժեհամակարգի ձևավորումը: Մեկ դասի ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ձեռք բերել այլ ոլորտներից համակողմանի գիտելիքներ, զարգացնել իմացական կարողություններ, գեղագիտական ճաշակը: Այլ խոսքով՝ միջառարկայականությունն օգնում է սովորողին բազմակողմանի զարգանալ՝ ձեռք բերելով ինտեգրված գիտելիքներ ու կարողունակություններ՝սովորել սովորելու,լեզվական գրագիտություն:

Ներածություն

Հետազոտությանթիրախայինխումբըևշրջանակը /քանակ, սեռայինբաշխում/	Թիրախային խումբը միջին դպրոցի դասարանցիներն են, նշանակալիությունը այն է, որ սովորողը գիտենա միևնույնառարկայիկամերևույթի,անձիևիրադրությանմասինտարբերառարկաներիցձեռքբերվածգիտելիքներնուտեղեկություններըմիավորելմեկընդհանուրհամակարգիմեջ:Դաոգնումէբացատրվողնյութիհիշտուխորությունը,անցածիուանցնելիքիմիջև տրամաբանականկապերիստեղծմանը,ձեռքբերածգիտելիքներիոգկարողություններիփոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնողարժեքունիերեխաների համար: Մասնակցել է 31 աշակերտ, 14աղջիկ և 17տղա:
Օգտագործվածհետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝քանական հետազոտություն՝ հարցաթերթիկիմիջոցով, որակական հետազոտություն՝խորինհարցազրույցիմիջոցովեւայլն)	Մեդիա գործիքներ,դասագրքեր,բնագիր, տեսաֆիլմեր, օժանդակ գրականություն, կիրառվել է քանակական մեթոդ, հարցաթերթիկ:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1.08.2023-10.09.2023

Գրականությանակնարկ • Մեջբերումներ արդենարված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից,տեղեկության վստահելիաղբյուրներից: **<u>Պարտադիրէկատարել հղումաղբյուրին</u>**	Հետազոտության կատարման ընթացքում օգտագործվել են ինչպես հայ մանկավարժների, այնպես էլ ռուս հեղինակների գրքեր: Այսպիսով, մենք պարզեցինք, որ ռուսերենի դասավանդման ընթացքում ուսուցիչն ունի լայն հնարավորություններ միջառարկայական կապեր ստեղծելու և դրանք որպես ուսուցման որակի բարձրացման գործիք կիրառելու համար: Ուստի և յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի այս հանգամանքը և կառուցողական համագործակցի գործընկերների հետ՝ նպատակ ունենալով ունենալ համակողմանի զարգացած ու գիտելիքներով հարուստ սերունդ: Ամփոփելովվերը ընկարագրվածը՝ամրագրենք,որմիջառարկայականկապերիհաստատումը դասավանդմանգործընթացումօգնումենդիմակայելիանրակրթությանմարտահրավերներին և բարձրացնելուսումնադաստիարակչական գործընթացիարդյունավետությունը: 1. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, стр.52. 2. Коменский Я. А. Великая дидактика. — М.: Книга по требованию, 2012 3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
Հետազոտությանընթացքը	**ԳԼՈՒԽ 1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ**

1.1 Միջառարկայական կապերի ստեղծման ազդեցությունը սովորողների իմացական զարգացման վրա

Ուսումնադաստիարակչական գործընթացի շրջանակներում սովորողից պահանջվում են մի շարք կարողություններ ու հմտություններ, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ դրսևորվել, կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում, ունեցած գիտելիքը կիրառել գործնականում: Սովորողը պետք է կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալու համար դպրոցականը պետք է ունենա մետաճանաչողական կարողություններ, որը կրթական պահանջ է:

Լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք առանցքային դեր ունեն մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների, լեզվամտածողության ձևավորման համար: Արդեն մյուս ուսումնական առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Կրթական համակարգը մեծ տեղ է տալիս առարկաների և գիտությունների համագործակցությունը: Եթե ուսուցիչը

	ցանկանում է ունենալ նպատակային ու արդյունավետ դաս, պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա: Միջառարկայական կապերը պետք է լինեն հասկանալի ու կշռադատված: Սովորողներին աշխարհի մասին բազմակողմանի տեղեկություններ տալը, այլ գիտելիքների հետ կապի մեջ դնելը կարևոր նշանակություն ունի վերջիններիս աշխարհաճանաչողության համար: Միջառարկայական կապը սովորողի համար կարելի է համարել նաև դաստիարակությանը խթանող միջոց: Միջառարկայական կապերը կորող են օգնել ուսուցչի ուսումնական առարկան հետաքրքիր ու գրավիչ դարձնել սովորողների համար: Շատ սովորողներ բարձր գնահատական ստանալու համար դիմում են մեխանիկական վերարտադրությանը՝ անգիր անելով այնպիսի թեմաներ, որոք պահանջում են կշռադատված ու կազմակերպված բանավոր շարադրանք: Սա շատ վտանգավոր ու դատապարտելի երևույթ է, քանի որ որևէ իմացական արժեք չունի, ուստի ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրական ու կշռադատված դատողական մտքերի արտահայտմամբ: Որպես կանոն, այդ սովորողներն անտաբեր են դասին: Դպրոցի ու դասապրոցեսի նկատմամբ

հետաքրքրասիրության պակասի, անտարբերության իրավիճակի հանգելու կարևորագույն պատճառներից մեկն էլ այն է, որ այսօրվա մեր կրթական համակարգում, ըստ էության, քիչ են հաշվի առնվում սովորողի տարիքային հոգեբանական առանձնահատկությունները: Այն ենթադրում է կրթական միջավայրի համապատասխանություն երեխայի հնարավորություններին՝ սկսած նստարաններից և դասասենյակի կահավորանքից, վերջացրած մանկավարժական մոտեցումներով[1]: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը[2]:

Միջառարկայական կապերն էլ ավելի արդյունավետ են իրականացվում այն պարագայում, երբ ուսուցիչը տեսական հատվածին տրամաբանական շարունակությունն ապահովում է գործնական առաջադրանքներով, ինչն էլ օգնում է մետաճանաչողության զարգացմանը:Միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Այսպիսի դասերի ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում:

[1] https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/CONFERENCE.pdf Հ. Աղախանյան, «Արդի աշխարհի մարտահրավերները դպրոցին», էջ 81:

[2] И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000, с. 233.

Առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ՝ խորացնելով ուսուցանվող նյութի իմացությունը: Ինտեգրված դասերի ընթացքում հնարավոր է միավորել ինչպես տարբեր առարկաներ, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ:

Ինտեգրված դասը նախօրոք պլանավորվում է տարբեր առարկաների ուսուցիչների կողմից: Աշխատանքի նախապատրաստական փուլում կարևոր են ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները: Վերջիններս համատեղ կազմում են իրենց դասի նպատակները, փորձում շաղկապել ինտեգրվող նյութի բովանդակությունները, գտնել ընդհանրություններ: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[3]»:

Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները: Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը: Զարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն իսկ

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908ՀՀհանրակրթությանմասինօրենք, հոդված 27, կետ 7:

	ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը[4]: Մետաճանաչողության հետ սերտորեն կապված է ինքնանդրադարձը: Դասի ժամանակ սովորողը պետք է անընդհատ հնարավորություն ունենա ինքնանդրադարձ կատարելու: Օրինակ՝ պատկերացնենք մի այսպիսի իրավիճակ, երբ ռուսերենի ուսուցիչը միջառարկայական կապ է ստեղծում աշխարհագրություն և պատմություն առարկաների հետ: Նախօրոք պատրաստած տեսասահիկն ունի հետևյալ բովանդակությունը՝ սահիկաշարի միջոցով ուսուցիչը պատմում է Ռուսաստանի Դաշնության տեսարժան վայրերի, պատմության մասին: Սահիկի դիտումից հետո խնդրում է, որ հատուկ թերթիկների վրա ռուսերենով գրեն տեքստ իրենց ծանոթ վայրերից մեկի մասին, որոք քիչ առաջ ներկայացվեցին սահիկի մեջ: այս պարագայում կօգնի սովորողներին համակարգել իրենց ողջ ներուժը, հիշել, թե նախկինում երբ, կամ ինչ հանգամանքներում են առնչվել այդ վայրերից որևէ մեկին, ինչ կարող է մտաբերել: Սովորողը համակարգում է իր ողջ տեղեկատվությունը տեքստի մեջ:

[4] http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ:

Հաջորդիվ ուսուցիչը հնարավորություն է ստեղծում, որպեսզի սովորողները ներկայացնեն իրենց աշխատանքները: Այստեղ շատ կարևոր են ուսուցչի հարցադրումները: Ավելի նպատակահարմար է, որ ուսուցիչը հետաքրքրվի, թե ի՞նչ հանգամանքներում է սովորողն առչվել այդ վայրի մասին տեղեկություններին, էլ ի՞նչ կարող է ավելացնել: Հետադարձ կապի ստեղծումը այս պարագայում շատ կարևոր է, քանի որ սովորողն ինքնանդրադարձի միջոցով կարող է գտնել իր բացթողումները: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կգրանցի հետևյալ արդյունքները.

- Սովորողը վերհիշեց ռուսերենի և պատմություն առարկայից իր գիտելքիները, ինչում նրան օգնեց ճանաչողությունը,
- զարգացավ նրա լեզվամտածողությունը,
- կատարեց տեքստային աշխատանք,
- վերհիշեց նկարագրական տեքստի պահանջները,
- բանավոր շփվեց ռուսերենով, ինչը զարգացրեց նրա հաղորդակցական կարողությունները,
- կատարեց ինքնանդրադարձ, տեսավ իր առավելությունները ու թերությունները:

Կարող ենք ասել, որ ճանաչողությունը նման առաջադրանքների ժամանակ, թույլ է տալիս սովորողին վերհիշել ու համակարգել տեղեկատվությունը, գտնել նմանություններ ու տարբերություններ, վերլուծել, որի արդյունքում նա ավելի խորքային է պատկերացնում մի շարք

	երևույթներ: Ճանաչողության վրա մեծապես ազդում է նաև ճիշտ ժամանակին արված հետադարձ կապը: Հետադարձ կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները: Հետադարձ կապը թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գուծընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել: Այս իմաստով հետադարձ կապը կարող է դրական դեր ունենալ ուսումնական գործընթացի վրա, քանի սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա լուծման եղանակը: Ճանաչողության զարգացմանը մեծապես կապված է ակտիվ ուսուցման հետ: Ակտիվ մեթոդներով դասը, որը կունենա նաև միջառարկայական բաղադրիչ, բավականին արդյունավետ կարող է լինել սովորողների մոտ համակարգված կարողությունների ու հմտությունների զարգացման վրա: Բերենք մեկ այլ օրինակ, երբ ուսուցիչը նպատակ է դրել ռուսերենի դասին զարգացնել սովորողների ճանաչողությանը՝ զուգահեռ ստեղծելով նաև միջառարկայական կապ: Ուսուցիչը կենդանիների մասին թեմայի շրջանակներում առաջարկում է մտագրոհի միջոցով գրատախտակին գրել տարբեր կենդանիների անուններ ու ապա խնդրում

	սովորողներից յուրաքանչյուրին նրա մասին անգլերենով պատմի այն, ինչ գիտի: Ուսուցիչը հնարավորություն է տալիս տեղեկատվություն փնտրել նաև համացանցում: Այս առաջադրանքի կատարման ընթացքում սովորողների մեջ կարելի է զարգացնել գիտելիքներ նաև բնագիտություն առարկայից, քանի որ կենդանիների մասին շատ կարևոր տեղեկատվություն իմանալով՝ ձևավորվում է համակարգային գիտելիք կենդանիների առանձնահատկությունների, նրանց հետ վարվեցողության կանոնների մասին: Կարևոր ձեռքբերում են նաև լեզվական գիտելիքները: Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել:
	Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Դրանք խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերի իրականացման ձև են ինտեգրված դասերը: Ինտեգրված դասը

պահանջում է կրթության գործընթացի մասնակիցների՝ ուսուցիչների, սովորողների, ծնողների, վարչական աշխատողների համագործակցությունը: Հանրակրթական դպրոցում աշխատուղ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում[5]:

Առհասարակ յուրաքանչյուր գործունեության հաջողության գրավականներն են բարձր աշխատունակությունն ու մոտիվացիան: Որպեսզի սովորողին հետաքրքրի դասապրոցեսը, այն պետք է համապատասխանի իր ներաշխարհին, նախասիրություններին ու հետաքրքրություններին: Սա պարզ ճշմարտություն է, որ գիտի յուրաքանչյուր ուսուցիչ: Իրականում սովորողին մոտիվացնելը բարդ ու միևնույն ժամանակ պատասխանատու գործընթաց է, որից կախված է կրթության որակը, սովորողի առաջադիմությունն ու զարգացումը: Կարծում ենք, որ միջառարկայական կապերի ստեղծումն այս գործընթացի համար կարող է

[5] Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, стр.52.

դառնալ իսկական օգնական: Մեկ դասի շրջանակներում սովորողը կլսի կտեսնի իրեն հետաքրքի տեղեկատվություն, կբացահայտի իր անհայտների պատասխանները: Պակաս կարևոր չէ սովորողներին 5 foot fourմոտիվացնելու ընթացքում վերջիններիս խրախուսելը:

- «Սովորողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր[6]»:

Միջառարկայական կապերի ստեղծումը թույլ է տալիս սովորողների մոտ ձևավորել մի շարք կարողունակություններ ևս, որոնցից են՝ թվային և մեդիա կարողունակություն, մշակութային կարողունակություն, տնտեսական կարողունակություն: «Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և

[6] «Հանրակրթությանմասին» ՀՀօրենք,հոդված 23.1

դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[7]»:

Մեկ բան ակնհայտ է, որ ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով, ուստի ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Իր կարիքները բավարարելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է:

Անցյալի նշանավոր ուսուցիչները փորձեր են արել ուսումնական գործընթացում առարկաների միջև կապ հաստատել: Յան Ամուս Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ գրել է, որ ամեն ինչ փոխադարձ կապի մեջ է և պետք է գտնել կապն ու սովորեցնել այդ կապով[8]:

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
[8] 2. Коменский Я. А. Великая дидактика, 2012:

Ժամանակակից աշխարհում կրթությունը մշտական փոփոխության և զարգացման մեջ է: Այս առումով կրթության մասնակիցները, մասնավորապես ուսուցիչները, բարձր պատասխանատվություն են կրում կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի համար: Կրթությունը տեղում չի կանգնում, քանի որ ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նպաստում է թե' ուսուցչի, թե' սովորողի բարձր շարժունակությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետ է դարձնում ուսուցումը, քանի որ աշակերտները սովորելու բարձր մոտիվացիա են ձեռք բերում, ինչն անչափ կարևոր հանգամանք է ուսումնառության ընթացքում:

Այսպիսով, կարող ենք պնդել , որ միջառարկայական կապերի նպատակային ստեղծումը բավականաչափ արդյունավետ կարող է լինել սովորողների ճանաչողության զարգացման համար: Ամեն ինչ կախված է սովորողի և ուսուցչի երկուստեք համագործակցելու և հաղթական արդյունքներ ունենալու ցանկությունից:

1.2 Ռուսերենի ուսուցման շրջանակներում միջառարկայական կապերի ստեղծման օրինակներ

Ռուսերենի դասավանդման ընթացքում

	ուսուցիչը գրեթե բոլոր դասերի ժամանակ ստեղծում է միջառարկայական կապեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետ է դարձնում ուսուցումը, քանի որ սովորողներին այս տեխնոլոգիաները տալիս են սովորելու բարձր մոտիվացիա : Ռուսերենի դասավանդման ընթացքում մեծ են հնարավորությունները ինֆորմատիկայի առարկայի հետ միջառարկայական կապեր ստեղծելու համար: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը կրթության մեջ էական ազդեցություն ունի ոչ միայն ուսումնական գործընթացի կազմակերպման, այլև ուսումնական նյութի բովանդակության վրա: Ուսումնական նյութը դառնում է ավելի ընդգծված՝ դրանով իսկ հետաքրքրություն առաջացնելով սովորողների մոտ, ինչպես նաև խթանելով նրանց ձեռք բերել նոր գիտելիքներ: Ռուսերենի դասավանդման ժամանակակից մոտեցումը ենթադրում է նորարարական տեխնոլոգիաների կիրառում: Ուսուցիչը առաջարկում է դիտել կարճամետրաժ ֆիլմեր, պրեզենտացիաներ պատրաստել, ինչպես նաև կազմել խաչբառեր և տարբեր ինտերակտիվ առաջադրանքներ կատարել: Մեծ է նաև համացանցային տեղեկատվական աղբյուրերի նշանակությունը զանազան տեղեկություններ փնտրելու և ինքնուրույն գտնելու տեսանկյունից: Նման դասերի ընթացքում ուսանողները ոչ միայն գիտելիքներ են ձեռք բերում բառապաշարի, քերականության, հնչյունաբանության բնագավառում, այլ նաև ստանում են որոշակի

	գիտելիքներ այլ ոլորտներից: Այսպիսով, ավանդական անգլերենի դասը դառնում է ավելի բովանդակալից ու բազմազան:
	Ռուսերենի իմացությունը ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է բազմաթիվ պատճառներով, այդ թվում այն պատճառով, որ օտար լեզուն հարստացնում է միտքը, ընդլայնում է գիտելիքները ուսումնասիրվող լեզվի երկրի մշակույթի, պատմության, ավանդույթների և սովորույթների մասին: Ուստի և միջառարկայական կապն անգլերենի դասավանդման ընթացքում հնարավոր է ստեղծել երաժշտության, պատմության, կերպարվեստի առարկաների հետ: Սա կխթանի նաև սովորողների գեղագիտական դաստիարակությունը, կձևավորի վերջիններիս մոտ մշակութային կարողունակություն: Մշակութային կարողունակության ձևավորման ընթացքում սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային

	ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ[9]:
	Ռուսերենի ուսուցման ընթացքում սովորողների մոտ ձևավորվում ու զարգանում է օտար լեզվով հաղորդակցման հմտություններ: Եվ քանի որ ներկա փուլում օտար լեզուների դասավանդման հիմնական խնդիրը լեզվի ուսուցումն է, ուստի ակնհայտ է կապը նաև մայրենի լեզվի հետ: Տեսանելի ու կարևոր է անգլերենի կապը նաև բնագիտական առարկաների հետ: Մի շարք գիտաբառեր, միջազգային եզրույթներ այս առարկաների ուսումնասիրության ժամանակ հենց անգլերեն լեզվով են, ուստի միջառարկայական կապ սեղծելն ուղղակի անխուսափելի է: Այսպիսով, կրթության զարգացման ներկա փուլում լեզվական կրթությունն առանցքային դերակատարում ունի, այն կարելի է համարել ուսումնառության գործընթացի արդիականացման գործիք: Այսօրվա սովորողը պետք է լինի համակողմանի զարգացած, իրազեկ լինի համաշխարհային գիտության, տեխնիկայի նվաճումներին, կարդա օտարալեզու մասնագիտացված գրականություն, կարողանա

[9] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

անկաշկանդ շփվել ու հաղորդակցվել մայրենի, ինչու չէ նաև օտար լեզվով, ուստի միջառարկայական կապերի ստեղծումը օտար լեզուների՝ այս պարագայում ռուսերենի դասավանդման ընթացքում կարևոր առաջնահերթություն կարելի է դիտարկել:

ԳԼՈՒԽ 2

2.1. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Մեր մանկավարժական պրակտիկայի շրջանակներում բազմիցս դիմել ենք միջառարկայական կապերի օգնությանը՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների մետաճանաչողությունը: Որպեսզի հասկանանք, թե որքանով է արդյունավետ է այդ գործընթացը, կատարել ենք փորձարարական աշխատանք:

Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ցույց տալու համար վերցրել եմ Ալեքսանդր Կոչետկովի «Баллада о проку реппомвагоне» բանաստեղծությունը, որն ուսումնասիրվում է 9-րդ դասարանում: Գիտությանզարգացումըմեզլավինարավորությունէտալիսհասկանալու, թեինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացըհնարավոր լինի, պետք է փորձենք գրավել աշակերտների ուշադրությունը:

Դասի ժամանակ միառարկանկապ ելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում: Մտածողության զարգացումը զգալի որեն խթանվում է, երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում:

Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն, ձանձրույթն ուռնտարբերությունը չեն ճնշումաշակերտին:

Որպես գիտաշակերտները ունենանմնայունգիտելիքներ, պետք է ուսուցանվողնյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն:

Միջառարկայական կապը ցանկացած առարկայի դեպքում ստարդյունավետ: Եթե երեխանգիտակցում է, որ այդ դասի սովորածը կարող է կիրառել նաև հաջորդ դասին, ավելի ուշադիր և հետաքրքրված է լսում և մասնակցում ֆնաբկմանը, փորձում է ինքնել գտնել կապ առարկաների միջև, այսպես նաև ավելի լավ է պատկերացնում սովորածի կարևորությունը և կիրառությունը:

Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտների ուշադրությունը հրավիրվում է նոր նյութի ընկալմանը:Զանազան ինֆորմացիոն խնդիրներ լուծելու մեթոդական ցուցումներ:

Միջառարկայական կապի հաստատումը ժամանակակից ուսուցման հիմնական պահանջներից մեկն է, որ փոխադարձաբար նպաստում է տարբեր առարկաների ուսուցման որակի բարձրացմանը:

Կիրառվել են հետևյալ մեթոդները՝ խմբային աշխատանք, բացատրություն, քառաբաժան:

Բացատրության մեթոդի միջոցով հավաքագրվել են նյութեր:

Պատմությանը ուսանողներին միջառարկայական կապերի պահանջում ընդհանրանումներ պատակունի երեխաների մոտ ուշադրություն ձևավորելու ժամանակ ընդունում ընդհանրանումներ պատակների

ցմեկն Դասագրքերում եղած բոլոր այն նյութերը, որոնք պատմական բնույթի են, պետք էներկայացնելժամանակաշրջանիմասինճիշտպատկերացումտալով,ամենիցառաջգործողությունն երիպատմականժամանակաշրջանըներկայացնելով:Երեխայիվառ երևակայությունընրանթույլ կտաճամփորդելդարերիխորքը:

- Հավաքագրել սիրո և հավատարմության հետ կապված տեղեկությունները:Սահնարավորությունէտալիսերեխաներինպատկերացումկազմելիսկամսիրո,հավատարմության,գեղեցկությանևամուրընտանիքիմասին,հաղորդակցվել գեղեցիկի հետ:
- Հավաքագրելերգիուերաժշտությանհետկապվածտեղեկությունները:Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթելբոլորմիջոցներով:Այդմիջոցներիցմեկնէերգիուերաժշտությունները,որոնքայնորենկարողենօգտագործվելռուսացլեզվիդասերին,այնդարձնելհաճելի,գեղեցիկ,տպավորիչուանմոռաց:Դասիներգիուերաժշտությունըկարողէօգտագործվելորպեսուսումնասիրվողնյութիհամար ընդհանուր հենք: Օրվա դասերը երաժշտությամբ ամփոփելը կամավարտելը նույնպես բացառիկ կարևոր նշանակություն կարող է ունենալ ոչմիայներեխաներիհոգնածությունըցրելու,նրանցաշխուժացնելուուակտիվացնելու,այլևամրապնդելուտեսակետից:
- Հավաքագրելնկարներիևնկարչության հետկապվածտեղեկությունները:

Նկարները վճռական տեղ ու դեր ունեն ռուսաց լեզվի դասերին: Դրանք կարևոր ուանփոխարինելիմիջոցենուսուցողականուդաս

տիարակչականնյութիառաջադրմանհամար,քան իորբառերովայդամենըհաղորդելուհնարավորութ յունչկա:Ցուրաքանչյուրանգամուսուցիչըիրհամ արպետքէպարզիտվյալնկարիհիմնականնպատ ակըևապանորանցնիուսուցմանպրոցեսումդրաօ գտագործմանը:

- Հավաքագրելաշխարհագրությանհետկապվածտեղեկությ ունները:

Աշխարհը ճանաչելը յուրաքանչյուր մարդու պարտականությունն ու երազանքն է,աշխարհն ու աշխարհի մասին եղած գիտելիքները երեխաների համար ոչ միայնշատ մատչելի են. այլև գրավիչ ու հետաքրքրող, ուստի դրանք պետք է փոքրիկ,չափավորվածմիավորներով:

- Հավաքագրելտեխնիկականգիտելիքները:

Այսօրվամերկյանքըհազարթելերովկապվածէգի տությանուտեխնիկայիտարբերճյուղերիհետ: Ռուսացլեզվիդասերինգիտատեխնիկականինֆոր մացիայիկարիքնամենօրկարող է ծագել. դա ժամանակի պահանջն է ոչ միայն դասի բովանդակությունննապահովելու,այլևմիջառարկ այականկապերիպահպանմանառումով:Մենքապ րումենքգիտությանևտեխնիկայիզարգացմանժա մանակներում,ուստիպետքէքայլենքժամանակին համընթաց:

Հարցեր,որոնքուղղվումենաշակերտներին

- Ի՞նչիմասին էբանաստեղծությունը
- Ի՞նչնէհուզումբանաստեղծին
- Ովէ՞բենբանաստեղծության հերոսները

- Ի՞նչիմասին էբանաստեղծությունը
- Ի՞նչնէհուզումբանաստեղծին
- Ովէ՞բենբանաստեղծության հերոսները
- Ի՞նչգույնունիսերը
- Ի՞նչկարևորիրադրությունեէվերահիշել
- Ո՞րնէբանաստեղծության երգային տարբերակը
- Ի՞նչհասկացամբանաստեղծությունից

Օգնեցի սովորողներին բացահսղտելու և խմբավորելու պատմության, մշակույթի,աշխարհագրության,գրականության, երաժշտության,նկարչությաննյութերըտվյալ թեմայի հետ կապված, համագործակցելու ընկերների հետ՝ փաստարկվածպաշտպանելովսեփականտեսակետը,հարստացնելուհանրակրթականգիտելիքները:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, ընդհանրացնում,ծավալվումէհետաքրքիր և ուսուցանող քննարկում:

Աշակերտները նշեցին, թե իրենց կարծիքով ինչն է հուզում բանաստեղծին,ասացին երեք բառ, որոնք կարևոր են բանաստեղծությունը հասկանալու համար ևասացին մեկ միտք, որ ամփոփում է ամբողջ նյութը: Նշվեց, թե որքանով է այսբանաստեղծությունըարդիական:

Միջառարկայական կապերի շնորհիվ

	աշակերտներն առավել ոգևորությամբենեներկայացնումթեման,նույնիսկ թույլսովորողաշակերտներնենակտիվմասնակցում: Թեման այնպիսին է, որ թույլ է տալիս առնչվել շատ առարկաներիհետ, ուստի հետաքրքրությունների շրջանակը մեծ է և յուրաքանչյուր աշակերտդրսևորվումէիրենհոգեհարազատևհետաքրքրողառարկայիշուրջ:Վերջումաշակերտները կատարում են «Баллада опропуренномвагоне»երգըևներկայացնում,թե ինչպիսին պետքէլինի սերըևամուր ընտանիքը: Երեխաները արժևորեցին ընտանիքը և ընտանեականջերմ հարաբերությունները:Կատարեցինքառաբաժանվ արժություններ. 1.Ինչէիքտեսնում 2.Ինչ էիքզգում 3. Ինչ էիքլսում 4. Նոր վերնագիրՀասանքիհրան, որ՝ • երեխաներնամրապնդեցինիրենցգիտելիքները,հարստացրեցին • ընկալեցինբանաստեղծությանհիմնական գաղափարը • ձևավորեցինունակություններիրենցսովորածըվերարտադրելուհամար • բացահայտեցինգեղեցիկըընկալելուընդունակություններ

- հետաքրքրությունունեցանեռաժշտության,նկարչությանն կատմամբ
- լցվեցին ամուրևերջանիկընտանիքունենալու գաղափարով
- կարողացանարդիականացնելթեման

Ուսումնասիրության համար ընտրել էինք «Մոլորակի հրաբխները» թեման ուսուցանել եմ միջառարկայական կապերի օգնությամբ: Միջառարկայական կապը ստեղծվել էր պատմության, գրականության, աշխարհագրության հետ՝ հանձնարարելով, որ սովորողները ռուսերենով պատմեն իրենց համար հետաքրքիր տեսարժան վայրի մասին ու մանրամասն շարադրեն, թե ինչպես են այցելել այնտեղ, ինչ են տեսել հանապարհին, ինչ են վերցրել իրենց հետ հանապարհորդության ընթացքում: Ավանդական մեթոդով պլանավորված դասի ընթացքում սովորողները կարդացին թեման, պատասխանեցին հարցերին, կատարեցին բառային աշխատանք գրատախտակին: Դասը հագեցած էր ակտիվ մեթոդներով, ՏՀՏ բաղադրիչով: Հայտորոշիչ թեստի արդյունքում պարզ դարձավ, որ սովորողների հիմնական մասը ամբողջությամբ ըմբռնել էին թեման, ունեին հավելյալ տեղեկություններ, կարողացան ստեղծագործաբար պատասխանել արագ պատասխաններով հարցադրումներին: Նկատվեց պասիվություն և հայտորոշիչ առաջադրանքի համար սահմանված ժամանակը չբավարարեցի շատերին: Այսպիսով ունեցանք հետևյալ արդյունքը:





Վերհանված արդյունքներ, եզրակացություններ,պատասխան հետազոտականհարցին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Շեշտադրելով ուսուցչի դերը ուսուցման որակի բարձրացման համատեքստում՝ կրկին հղում անենք միջառարկայական կապերի նշանակությանը սովորողների մետահանաչողության զարգացման, համակարգված գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ ձեռք բերելու տեսանկյունից: Վերահաստատենք մեր այն պնդումը, որ միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին են դարձնում այս գործընթացը, քանի որ սովորողն այդ ակտիվ միջավայրում

լիարժեք կարող է բավարարել իր հետաքրքրությունները, գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները:

Կարծում ենք, որ այստեղ մեծ է հատկապես ուսուցչի դերը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, անուշտ, տեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը, մտածողությունը, ինչպես նաև մետաճանաչողությունը:

Այսպիսով, մենք պարզեցինք, որ ռուսերենի դասավանդման ընթացքում ուսուցիչն ունի լայն հնարավորություններ միջառարկայական կապեր ստեղծելու և դրանք որպես ուսուցման որակի բարձրացման գործիք կիրառելու համար: Ուստի և յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի այս հանգամանքը և կառուցողական համագործակցի գործընկերների հետ՝ նպատակ ունենալով ունենալ համակողմանի զարգացած ու գիտելիքներով հարուստ սերունդ:

Ամփոփելովվերընկարագրվածը՝ամրագրենք,որմիջառարկայականկապերիհաստատումըդասավանդմանգործընթացումօգնումենդիմակայելիանրակրթությանմարտահրավերներին նբարձրացնելուսումնադաստիարակչական գործընթացիարդյունավետությունը:

Միջառարկայական կապերիհաստատումըհնարավորությունէտալ

	իսմիևնույնառարկայիկամերևույթի,անձիևիրադրությանմասինտարբերառարկաներիցձեռքբերվածգիտելիքներնուտեղեկություններըմիավորելմեկընդհանուրհամակարգիմեջ:Դաօգնումէբացատրվողնյութիճիշտուխորյուրացմանը,անցածիուանցնելիքիմիջևտրամաբանականկապերիստեղծմանը,ձեռքբերածգիտելիքներիուկարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնողարժեքունիերեխաների համար:
Այլտեղեկատվություն	

Օգտագործվածգրականության

1. Վ. Խ. Հարությունյան, Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր.,1970, 293էջ:
2. «Հանրակրթության պետական չափորոշիչ», «Շրջանավարտին ներկայացվողորակականպահանջներ», 2011,էջ 21:
3. Ամիրջանյան Յու.,Սահակյան Ա.-Մանկավարժություն,ուսումնականձեռնարկմանկավարժական ֆակուլտետիաշակերտներիհամար:Մանկավարժիրատ.:Երևան2005թ.
4. Խաչատրյան Ս.,Պետրոսյան Ս.,Թերզյան Գ.,Ուսուցիչներիմասնագիտականզարգացմանևկրթության բովանդակությանգնահատումը՝Հայաստանումհանրակրթության բարեփոխումներիհամատեքստում, Եր.,2013, –49 էջ:
5. МаксимоваВ.Н.Межпредметныесвязивпроцессеобучения.–М.: Просвещение, 1989г. –100 с.
6. Н.М.Бурцева,Межпредметныесвязикаксредствоформированияценностныхотношений,СПб., 2001, 231 с.

Հավելվածն
եր